ԱՆՁԻ ԵՍ-Ի ԻՆՔՆԱՄԲՈՂՋԱՑՄԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ ԵՎ ՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԵՆՐԻ ՄՈՔՈՅԱՆ

Ես-ի ինքնամբողջացման հիմնախնդիրը փիլիսոփայական մտքի պատմության մեջ դիտվել է որպես սուբյեկտի և օբյեկտի, մարդու և արտաքին աշխարհի, կեցության և գիտակցության ակտիվ, անհրաժեշտ ու օրինաչափ ստեղծագործական փոխհարաբերություն: Դեռ Հերակլիտ Էփեսոսցին մ.թ.ա. 544–483 թթ. նշում էր, որ ի ծնե բոլոր մարդկանց հատուկ է ինքնաճանաչման և ինքնահաստատման ունակությունը: Հայկական գրի ստեղծող, հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցը գրում է, որ ճանաչողը մարդ-սուբյեկտն է[1]*: Ըստ Մաշտոցի, մարդը բաղկացած է երկու հակադիր տարրերից՝ նյութից և հոգուց: Նյութն ինքնին կենդանազուրկ է, հոգին է, որ նրան կյանք է ներշնչում և առհասարակ շարժման մեջ գնում: Հոգու առկայությունը մարմնի մեջ, ըստ Մաշտոցի, արտահայտվում է նրանով, որ «բերան խօսի, աչք տեսանեն, ականջք լսեն, ունչք հոտոտին, ձեռք շոշափեն, ոտք գնան, սիրտ շարժի իմանալեօք...»*[2]*: Փաստորեն, հոգին հավասարեցվում է մարդու արտաքին հատկանիշներին: Մաշտոցը գրում է. «Հոգի ասի կենդանութիւնս և միտք ասի իմաստութիւնս, և բան ասի խոսողութիւնս»*[3]*: Հին աշխարհի մեծանուն փիլիսոփա Պլատոնը գրում է, որ հոգու գործունեությունը հոգու պասսիվ ընկալումը չէ, այլ ներքին աշխատանք, որը կրում է ինքն իր հետ զրույցի բնույթ: Խորհրդածելով հոգին «ոչ մի բան չի անում, կարծես խոսում է, հարցնելով ինքն իրեն, պատասխանելով, հաստատելով և ժխտելով»*[4]*: Ռ. Դեկարտի մոտ Ես-ը նույնպես նշանակում է «իմ հոգի», որի շնորհիվ «Ես համարվում եմ այն, ինչ ես կամ»: Դեկարտյան կոնցեպցիայի համաձայն, «մտածող «Ես»-ը, անտարակույս, հավաստիությամբ գիտի այն մասին, ինչ մտածում է, կասկածում և հաստատում, ուզում, սիրում է և ատում...»*[5]*: Ես-ի գիալեկտիկական առաջընթացն օբյեկտիվորեն պայմանավորված է գիտակցության ակնթարթների պարբերական շարքով: Նախ, անձի Ես-ի ինքնամբողջացում, որ նշանակում է նրա անհատական հոգեբանական հատկությունների և հոգեկան ֆունկցիաների դիալեկտիկական գումար, որի ատրիբուտներն են զգայությունները, մտքերը, զգացմունքները, որոնք անմիջականորեն կարգավորում, պահում, փոխարկում և միաժամա-*

---

[1] *Ցաճախապատում ճառք. Վաղարշապատ, 1894–1896, էջ 32:*

[2] Հ. Գ ա բ ր ի ե լ յ ա ն. *Հայ փիլիսոփայական մտքի պատմություն. հ. 1, Երևան, 1956, էջ 127:*

[3] *Նույն տեղում:*

[4] П л а т о н. Теэтет. М.-Л., 1936, с. 116.

[5] Р. Д е к а р т. Избранные произведения, М., 1950, с. 283.

նակ փոխհատուցում, համակշռում, հավասարակշռում և ներդաշնակություն են ստեղծում, քանզի Ես-ի ինքնամբողջացումը օժտված է որոշակի յուրատիպ հավաքական ուժով ու իշխանությամբ: Ապա՝ Ես-ը միաժամանակ կատարում է թե՛ գիտակցության, թե՛ ինքնագիտակցության անհրաժեշտ համատեղման և ընդհանրացման գործոնի դերը: Մարդու Ես-ը փիլիսոփայական տեսանկյունից այն ինտեգրալ գոյացությունն է, որ հանդես է գալիս մարդու կողմից անհրաժեշտորեն իրականացվող գործնական նախաձեռնումներին դինամիկ նպատակասլացություն հաղորդելու գործոնի դերում: Ես-ին բնորոշ անհատականության ինտեգրացնող առանձնահատկությունն այն է, որ նա իր ձևավորման հենց առաջին պահից ակտիվորեն կողմնորոշվում է աշխարհը մաս առ մաս ճանաչելու, այն մեկ ամբողջականության մեջ արտացոլելու ու իմաստավորելու նպատակով:

Յուրաքանչյուր կոնկրետ, եզակի անհատ ընդհանուր Ես-ի մասնավոր բովանդակությունն է: Առանձին Ես-ը կարող է սահմանվել մյուս Ես-երի հետ իր հարաբերության միջոցով: Ըստ Հեգելի, Ես-ը ոգին է, «Դրա համար էլ ողու ամեն մի գործունեություն միայն ինքն իր ըմբռնումն է, և իսկական գիտության նպատակն այն է, որ ոգին ամեն ինչի մեջ է, որ կա երկնքում, երկրում, և ճանաչում է ինքն իրեն»[6]: Ես-ը փոխվում է մարդու կյանքի պայմանների փոփոխությանը զուգընթաց: Անձի Ես-ի դինամիկան մշտապես առկա է մարդու կյանքի տարիքային փուլերի օրինաչափ հերթափոխության առաջընթացում, հարաբերականորեն պահպանելով իր ինքնուրույնությունը իրեն հատուկ որոշակի սոցիալական ինքնատիպ գործունեության ուղղվածությամբ և արժեքային կողմնորոշմամբ: Անձի կողմից կյանքի ճանաչումը, իր որոշակի տեղը նրանում, սկսվում է ինքնաճանաչման այն պահից, երբ նա սկսում է խորհրդածել իր ակունքների, միջմարդկային հարաբերությունների, դրանց կարգի ու անհրաժեշտության մասին:

Անշուշտ, Ես-ը կազմող բոլոր բաղադրատարրերը ածանցվում են անձի սոցիալական փորձին և այսպես թե այնպես կախված են սոցիալական որոշակի խմբի հետ նրա նույնականացումից: Հետևաբար, կարող ենք ասել, որ անհատական Ես-ը գիտակցվում և կառուցվում է այն հետադարձ կապերի գործողությունների իմաստավորման հետեանքով, որոնք մշակվում են միջանձնային հարաբերություններում և տրվում են հասարակության կողմից, սոցիալական դնահատականի ձևով յուրաքանչյուր անհատի: Ինչ վերաբերում է ինքնագիտակցությանը, որը ոչ միայն գիտակցության մենախոսությունն է ինքն իր հետ, այլև սոցիալական անհատի անկապտելի օրգանական ամբողջությունը: Ավելի շուտ գա անձի Ես-ի երկխոսությունն է իր սեփական սոցիալական փորձի հետ, որն էլ հիմք է ծառայում ըմբռնելու այն անհրաժեշտ և օրինաչափ պահանջները, որոնք հասարակության կողմից անհրաժեշտորեն ներկայացվում են մարդ կոչվող սոցիալական անհատին: Ես-ի ինքնամբողջացման դիալեկտիկայի փայլուն լուսերից է V դ. հայ ժողովրդի ըմբոստացումը և ազատատենչ ոգու ընդլայնման դրսևորումը Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության

[6] Г е г е л ь. Соч., т. III, М., 1956, с. 25.

դեմ: Սասանյանները ծրագրավորված բոլոր եղանակներով ու միջոցներով ձգտում էին հայոց եկեղեցու գործունեությունն ամբողջությամբ վերցնել իրենց ձեռքը, դրանով իսկ զրկելով այն ոչ միայն կրոնական արարողություններից ու նախաձեռնումներից, այլև ազգային կողմնորոշումից: Ղազար Փարպեցին գրում է, որ Հազկերտ I-ը գիտակցում էր, որ հայերը «օտար են մեր հավատին (մեր եսաշխարհին – Հ. Մ.), ատում են մեզ և հույների հետ ունեն նույն հավատն ու օրենքները»[7]: Ըստ այդմ էլ, բոլորովին պատահական բնույթ չէր կրում Պարսկաստանի կողմից պետական մակարդակով վարվող հակաքրիստոնեական կրքոտ քաղաքականությունը, քանի որ այս տարածաշրջանում հայոց եկեղեցին այն ինքնավար, անկախ և ինքնակառավարվող միակ հոգևոր կազմակերպությունն էր, որն ի զորու էր անմիջականորեն սատարել հայ ժողովրդի կենաց ու մահու պայքարն օտար նվաճողների դեմ, հանուն ազգային Ես-ի անաղարտության, նրա հավերժ գոյատևման ու պահպանման: Նախ, որ հայոց մեծամեծները լավ էին պատկերացնում Սասանյանների համեմատությամբ իրենց թե՛ ազգային, թե՛ բարոյական, թե՛ քաղաքական ու մշակութային առաքինությունը և խորապես համոզված էին, որ «այս բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում անուսումնությունից»[8]: Հայ ազգի V դ. ընտրյալները քաջ գիտակցում էին, որ միայն ուսմամբ է հնարավոր ձևավորել և զարգացնել այս աշխարհի միակ բանական էակի մարդու Ես-ի բարոյական բարձր ինքնագիտակցությունը, սկզբունքայնությունը, հայրենասիրությունը, մարդասիրությունը: Այստեղ միանգամայն ներդաշնակորեն են հնչում Եղիշեի մարգարեական մտքերը. «Կույրը զրկվում է արեգակի ճառագայթներից, իսկ տգետը զրկվում է կատարյալ կյանքից: Լավ է աչքով կույր (լինել), քան մտքով: Ինչպես որ հոգին մեծ է մարմնից, այնպես էլ մտքի տեսողությունը մեծ է մարմինների տեսողությունից»[9]:

Արտաշատում հավաքված հայոց կարապետները Տիզրոն ուղղած իրենց պատասխան նամակում, առաջնորդվելով դարաշրջանի սոցիալական, քաղաքական և բարոյահոգեբանական մթնոլորտը պայմանավորող համամարդկային Ես-ի արժեքներով, ելնելով քրիստոնեական գաղափարախոսության դիրքերից, նշում էին. 1) քրիստոնեական գաղափարների ճշմարտացիության և մազդեզանց կրոնի չարաբաստիկության, մանկամտության, պարզունակության մասին, 2) ժողովականները մատնանշում էին. որ այն հարցերը, որոնք վերաբերում էին խղճի ազատությանը, երբեք և ո՛չ մեկի կողմից չէին կարող օրենքի ուժով փաթաթվել մարգկանց վզին, 3) նրանք միաժամանակ ընդգծում էին, որ իրենց հավաաը, գաղափարները (սեփական անձնային Ես-ը) երբեք չեն փոխի, իսկ եթե հարկավոր լինի մեռնել հայրենիքի համար, պատրաստ են իրենց զոհել, 4) նամակն ավարտելուց հետո ժողովականները երգվեցին հավատարիմ մնալ իրենց միաբանությանը[10], այսինքն սեփական ազգային Ես-ին: Երբ Հազկերտ II-ը հրա-

---

[7] Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Պատմություն հայոց. գ. ԺԲ, Էջմիածին–Տփղիս, 1904, էջ 43:

[8] Ե ղ ի շ ե. Վարդանանց պատմությունը. Երևան, 1958, էջ 30:

[9] Նույն տեղում, էջ 20:

[10] Ե ղ ի շ ե. Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 14–15:

մայում է Տիզբոն ներկայացած հայ նախարարներին երկրպագել կրակին, սպառնալով նրանց հոգեկան և մարմնական տանջանքներով, հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանն աներկյուղ պատասխանում է. «Այն օրենքները, որ աստծուց սովորեցի իմ մանկությունից թողնել և երկյուղի հետ փոխել, անհնար է: Թե որ մարդուց ընդունած լինեի այն ճշմարիտ վարդապետությունը, որ իմ անձը ողորմելի համարեի, ուր մնաց Աստծո բերանից ընդունած և սովորած օրենքները վաճառել սուտ. փառքերի և մարդու երկյուղի փոխարեն: Աստված չանե: Իմ պատասխաններն այս են, սրա վրա ցանկանում եմ մեռնել, քան թե ուրացությամբ ապրել առանց աստծու»[11]: Հենց այդ իմաստով էլ Սասանյանների լծի դեմ հայ ժողովրդի համազգային ապստամբությունը և 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի հերոսամարտը Եղիշեն անվանեց «Վարդանանց պատերազմ»:

Ասենք, որ օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի պայքարի և ոչ մի դրվագ այնպես վառ ձևով իր հետքը չի թողել մեր ժողովրդի եսաշխարհում, ինչպես Ավարայրի հերոսամարտը: Հերոսամարտ, որն առանձնանում է ոչ միայն հանուն սկզբունքային և արմատական, հոգևոր և ֆիզիկական արժեքների պահպանման ու դոյատևման, այլև հայ ժողովրդի արդարամիտ, ազատախոհ ու ազատատենչ համազգային Ես-ի վերելքի դիալեկտիկական աճի և զարգացման իմաստով: Գիտնական-պատմիչ Եղիշեի հերոսապատումի փիլիսոփայական իմաստն ու գեղարվեստական արժեքը նրա կողմից ամբողջացվող անչափ տարողունակ ու անսահման հայրենասիրությունն է՝ հայ ժողովրդի միաբանությունը, անձնուրաց սխրագործությունը, հայրենիքի միասնության, ազատության դաղափարների ջերմ դրվատանքը:

V–XVIII դդ. մատենագետների մեջ Վարդանանց ազատագրական պատերազմի թե՛ քաղաքական, թե՛ ազգային դրդապատճառների ճշգրիտ բացահայտման տեսակետից առ այսօր Եղիշեն մնում է պատվավոր առաջին տեղում: «Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին» մենագրությունը, եթե մի պահ չհաշվենք Խորենացու «Հայոց պատմությունը», հայ հին բանահյուսության այն օրինակելի գլուխգործոցն է, որ մեր ժողովրդի դարերով կերտված ազգային Ես-ին սպառնացող օրհասական պահերին վեր է ածվում ինքնատիպ քաջալերության, հույս, հավատ, մխիթարություն ազգի սիրելիների համար, խիզախություն, կորով ու եռանդ ընդդեմ թշնամու՝ Հայաստանն անկախ, ազատ և ինքնավար դարձնելու նշանաբանով:

Միանգամայն օրինաչափ է, որ Եղիշեի «Վասն Վարդանաց և Հայոց պատերազմին» անմահ մատյանն, ըստ էության, XIX դ. դրեթե բոլոր հայ գրողների, վիպասանների, հրապարակախոսների համար ծառայել է որպես խորհրդանիշ ընդդեմ պարսկական, օսմանյան և առհասարակ Հայաստանի ինքնուրույնությանն սպառնացող թե՛ արտաքին քաղաքական նկրտումների, թե՛ ներքին երկպառակությունների դեմ: Հայ նոր դրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանն իր սոցիալական, քաղաքական և մարդասիրական հարցադրումների ուղղվածությունն առավել նպատակասլաց դարձնելու համար լայնորեն օգտվել է Մովսես Խորենացու և Եղիշեի

[11] Նույն տեղում, էջ 31–41:

պատմագեղարվեստական բնույթի ստեղծագործություններից: Խ. Աբովյանն իր հոյակերտ «վրժինով» Վարդան Մամիկոնյանի հերոսական կերպարից երփներագ գույներով կերտում է XIX դ. հայ ազատագրական պայքարը մարմնավորող Ես-ը, իբրև նշանաբան, որի աննման սխրանքի օրինակը բոլոր հայ մարտիկների համար նոր Վարդանի Ես-ը հիմնադրելու միաձույլ հաղթական կոչի է վերածվում. «Մեռնի՛նք, թո՛ղ էսօր մենք էլ միասին, որ սուրբ Վարդանի հասնինք ախ փառքին: Ընկե՛ր մի՛ վախիք, դուք ղոչախ կացե՛ք, քամակ քամակի տվե՛ք, միացե՛ք, թող մեկ հող, մեկ սուր փրթի, մեղ թաղի, մինչև եդին մարդն մեկն էլա չփախչի»[12]: Իսկ Ղևոնդ Ալիշանը Եղիշեի «Վարդանանց պատմության» հիման վրա գրում է «Պլպուլն Ավարայրի» պոեմը, «Կարմիր Վարդանը»[13] և այլ ստեղծագործություններ, որոնց գաղափարական բովանդակությունը սերտորեն կապված է առաջին հերոսապատում դրքի հետ: «Պլպուլն Ավարայրի»-ն գեղարվեստական այն պատկերավոր երկերից է, որն սկսվում է հակիրճ առաջաբանով. Ղ. Ալիշանը պատկերում է մի մեղմ ու հանդարտիկ գիշեր, ինքը շրջում է Ավարայրի դաշտում, ուր իրենց կյանքը զոհել են հայոց դյուցազունները: Նա իր եսաշխարհի լայնարձակ ծովն ընկած հանկարծ հորիզոնում տեսնում է ծագող լուսինը, որն իր լույսը տարածում է ամենուր: Հերոսապատումի վերջում հեղինակը գրում է, որ Վարդանի անձնային Ես-ի կերպավորողն ու անմահացնողը Եղիշեն է, որը հայ դյուցազունի մեջ խտացրել ու մարմնավորել է ինքնամբողջացվող հայոց ընդհանուր ազգային Ես-ի փիլիսոփայական լավագույն գծերը, ահա թե ինչու կանցնեն տասնյակ հազարավոր տարիներ, բայց նա ապրել է, ապրում է և կապրի իր ժողովրդի հետ միասին.

«Թե բյուր դարք անցնեն դու մընաս Վարդան»,
Ասաց Եղիշե, հետ արուսեկին,
Փախավ, ծածկեցավ, սիրաձայն հոգին...
Պըլպուլն ի թըփեն սովորեցավ Վարդան,
Կանչե զբուն գիշերըն՝ Վարդա՜ն, Վարդա՜ն...
Կանչե՛, պլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Որ յերկնաց ի վայր, հայի և Վարդան,
Հիշե զՀայաստան տուն յուր սիրական,
Հայաստան հիշե զյուր Կարմիր Վարդան[14]:

Հովհ. Հովհաննիսյանը, «Տղմուտ» բանաստեղծության մեջ գովաբանելով հայ ազգային հերոս Վարդան Մամիկոնյանին և նրա զինակիցների հերոսական Ես-ը, հակադրում է նրանց իր ժամանակի քաղաքականապես թույլ և դաղափարական տեսանկյունից տկար դործիչների խավարամոլ Ես-ին, որոնց չի անհանգստացնում հայրենյաց նվիրվածությունը, կոչ է անում ստեղծել միաբանություն, ունենալով Վարդանների առյուծական հոդին և խաչով ու սրով վերականդնել հայ ազդային պետությունը:

---

[12] Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու. հ. III. Երևան, 1948, էջ 99:
[13] Ցուշիկք հայրենեաց հայոց. հ. Ա. Վենետիկ, 1869, էջ 239-269:
[14] Ղ. Ա լ ի շ ա ն. Նվագներ. Երևան, 1957, էջ 43:

Ո՜հ, թե ելներ կորած մոռցված դամբանից
Վարդանների առյուծական այն հոգին,
Եվ երկաթի խարազանը թունալից
Տար ձեր ժպիտի, ամոթապարա ճակատին:
Եվ արցունքով համբուրեիք սուրբ չիրիմ,
Ուխտ կապեիք նորից խաչով ու սրով
Կանգնեցնել նոր Արտաշատ Խոխոցիմ,
Վերջ տալ անարգ այս վիճակին արյունով[15]*:*

Ես-ի և հասարակության դիալեկտիկական անխզելի կապն ու փոխպայմանավորվածությունը ենթադրում է, որ անձի Ես-ի տակ միաժամանակ պետք է հասկանալ հասարակություն կամ հասարակական Ես: Այլ կերպ ասած, մարդու կողմից ստեղծված առարկայական միջոցները սկսում են հանդես գալ օբյեկտիվորեն, այսինքն անհատից դուրս գոյություն ունեցող արժեքների, ձևերի, ճանաչողական նորմերի չափանմուշների ու օբյեկտ-հիպոթեզների դերում: Ինչ խոսք, համաձայն ինտերիորիզացման (լատ. interior – ներքին), այսինքն անցում գրսից ներս գործընթացի, արտաքին գործողություններն անհրաժեշտորեն ենթարկվում են յուրօրինակ փոխակերպման ընդհանրացվում, բանավորացվում, կրճատվում և, այնուամենայնիվ, դառնում պիտանի հետագա զարգացման համար՝ անցնելով արտաքին հնարավորությունների սահմանները[16]*: Այլ կերպ ասած՝ Ես-ի ինքնագիտակցությունը և ընդհանրապես հոգեկանը, ըստ էության, կարող է ձևավորվել ու զարգանալ մարդ և մարդ ինքնագիտակցությունների ինտերհոդեբանական (ներհոդեբանական) եսականացման ճանապարհով: Այս իմաստով Մեսրոպ Մաշտոցը գրում էր, որ «... միտքը և զգայությունները ազատ կամքով լի են իմաստության բոլոր օգուտներով, որը (իմաստությունը) առաջնորդում է դեպի առաքինասեր վարք երևացող և աներևույթ բաների մեջ: Որովհետև նրանով ենք ապրում և շարժվում և նրանով ենք ընթանում դեպի առաջիկա բարիքները՝ ավետելու և անսուտ խոստումների համար»*[17]*: Ասենք, որ Ես-ի ինքնագիտակցությունը հանդես է գալիս գիտակցության ինքնավերահսկող գործոնի դերում, կողմնորոշում իրենից դուրս գտնվող իրերն ու գիտակցությունը: Գիտակցությունը, որի հիմնական օբյեկտը «Ես»-ն է, նշանակում է ոչ այլ բան, քան ինքնաճանաչում և ակտիվ միջանձնային կենսադիրք: Իր սկզբնական ճանաչողական իմաստով ինքնագիտակցությունը (որպես ինքնավերահսկող գիտակցություն) միանշանակ ձևով կողմնորոշվում է դեպի «ճանաչիր աշխարհը» իմաստասիրական կոչի իրացումը, իսկ երկրորդում՝ «ճանաչիր ինքդ քեզ» ավանդավորական կոչի իրացմանը: Ահա թե ինչ է գրում միջնադարյան հայ մտածող Գրիգոր Տաթևացին. «Մարդն առհասարակ կարող է ձեռք բերել այն գիտությունը, որը մշակվում է բնության ազդեցության ներքո, որովհետև դա մտածողական ճանաչողություն է: Ընդհանրապես, մտածողա-*

---

[15] *Հ. Հովհաննիսյան. Երկեր. Երևան, 1959, էջ 91:*
[16] А. Н. Леонтьев. Деятельность. Сознание. Личность. М., 1975, с. 95.
[17] *Յաճախապատում ճառք, էջ 34:*

կան ճանաչողությունը հետևում է բնության իրերի, բնության պարունակությունից բացի նա այլ բան չի տեսնում, որովհետև ինչ որ բնության համար անհաս է, անհաս է նաև մտքին»[18]:

Մարդը երբեք չի կարող խելամիտ գործել՝ չճանաչելով ինքն իրեն գոնե նվազագույնի չափ: Սեփական Ես-ի զարգացումն ու ինքնամբողջացումը իրականացվում է անձի որոշակի փոփոխությամբ, որպես նրա հավասարակշռող դերի անհրաժեշտ դրսևորում: Անվարան կարող ենք ասել, որ անձի Ես-ի ինքնամբողջացման աստիճանը հարաբերականորեն կարող է լինել միանգամայն տարբեր: Մեզ հայտնի է, որ բացառիկ շնորհաշատ և տաղանդավոր մարդիկ շատ շուտ են հայտնաբերում իրենց Ես-ը և հստակորեն են տաբերում այն շրջապատի Ես-երից, որովհետև նրանք, վաղ զգալով սեփական Ես-ը, ամենուրեք ջանում են գերագույն ինքնահաստատման, երբեմն էլ ծայրահեղության հասնող հիվանդագին սրությամբ ընկալելով այն: Դեռ վաղ մանկական տարիքից նրանց հատուկ է չափից ավելի ներթափանցել՝ ինքնագիտել, ինքնավերլուծել սեփական ներաշխարհը՝ հասնելով ինտեգրացիայի բարձրագույն աստիճանի: «Սակայն,– գրում է սոցիոլոգ Է. Ֆրոմը,– կատարելության նման բարձր աստիճանի հասած անհատներ կարելի է գտնել ուսուցման բոլոր մակարդակներում, անգամ տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջև»[19]: *Նրանցից յուրաքանչյուրի կողմից անձնային Ես-ի ճանաչումը՝ ինքնահաստատումը, այնպիսի հոգեիմաստասիրական անհրաժեշտ եղանակ է, որի միջոցով համազգային գունագեղություն ձեռք բերած անհատների գործելակերպի մեջ կարելի է տարբերել նրանց իսառնվածքը և առանձնացնել համամարդկայինը:*

Դա հատուկ է խարիզմատիկ (հուն. χαρισμα՝ ողորմածություն, աստվածային պարգև) առաջնորդներին, որոնք քաղաքական բեկումնալից պահերին, իրենց խելքի, էներգիայի զորեղ կամքի և քաղաքական հեռատեսության շնորհիվ արագորեն անցնում են իշխանության գլուխ: Մարդկության սոցիալական մտքի պատմությանը հայտնի են իրենց գործունեության սկզբնական շրջանում որպես տիպիկ խարիզմատիկ առաջնորդներ Նապոլեոնը, Վ. Լենինը, Բ. Մուսոլինին, Ֆ. Կաստրոն, Բ. Ելցինը և ուրիշներ, որոնք ա) համապատասխան հոգեկան դինամիկ խառնվածքով օժտված հուժկու Ես-ով կարողացել են հայտնաբերել իրենց պատմական առաքելության ռացիոնալ նպատակաուղղվածությունը, բ) սեփական Ես-ի ինքնաճանաչման նմանօրինակ սրությունը միանգամայն բնորոշ է հանճարեղ անհատներին, որը պայմանավորված է նրանց կողմից պատմական ընթացքի առանձնակի նշանակալիության իմաստավորմամբ կամ իրենց կողմից անմիջականորեն դրսևորվող պատմական իրավիճակի նկատմամբ պատասխանատվության համամարդկային կարևորությամբ: Այստեղ հիշատակության է արժանի հայոց քերթողահայր Մովսես Խորենացու պատմական կերպարի օրինակը, որն իր Ես-ի հաստատումը ապացուցեց դեռևս վաղ հասակից կարողանալով կրոնական դիտելիքներին զուգընթաց, հա-

---

[18] Գ. Տ ա թ և ա ց ի. Գիրք քարոզչութեան. Կ.Պոլիս, 1741, էջ 79, 617:

[19] Э. Ф р о м м. Иметь или быть? М., 1990, с. 44.

յերեն, հունարեն, ասորերեն և պարսկերեն լեզուների մեջ բավականաչափ հմտություն ձեռք բերել և ուղևորվել ժամանակի մտավոր խոշոր կենտրոններ՝ Ամիդ, Եդեսիա, Հռոմ, Աթենք, Անտիոք, Ալեքսանդրիա և Կոստանդնուպոլիս: Լեզուների հետ նա սովորեց նաև ճարտասանություն, քերականություն և այլն: Ձեռք բերած գիտելիքների և հատկապես հայրենիքում դրանք տարածելու, եղածը խորացնելու և որակական նոր աստիճանի հասցնելու շնորհիվ Խորենացին ստացավ Քերթողահայր մականունը: Իր «Պատմություն»-ը նա սկսում է հայ նախարարների և ընդհանրապես մեծատունների «անիմաստասեր բարքերի» խիստ քննադատությամբ, մի կողմից, մյուս կողմից իր ուշադրության կենտրոնում է պահում անկեղծ, անաղարտ և անկաշառ հայրենասիրությունը, մարդկանց ինքնագիտակցության բարձրացումը և ուժեղ թշնամու դեմ նրանց հերոսական գոտեմարտի դուրս բերելու վսեմ ձգտումը հանուն ազգային Ես-ի պահպանման ու հարատևման: Մեր նախնիները քաջեր են, ասում է Խորենացին, Հայկ, Արամ և Տիգրան, որպես քաջեր, իրենց ժողովրդի փրկարարներն են եղել. «Իմ կարծիքով քաջերի ազգերն էլ քաջեր են»[20]: Քերթողահայրը ցույց է տալիս, որ Եղիշեի նշանաբանը, թե «Մահ իմացեալ անմահութիւն է», միշտ էլ եղել է ժողովրդի ազգային Ես-ի պահպանման նշանաբանը. ազգի ղեկավար անձինք իրավունք չունեն շեղվելու այդ ճանապարհից: Որպես հայոց ազգի Ես-ի մարմնացման և կատարելության տիպար՝ Խորենացին վառաբանում է Տիգրան Երվանդյանին, որովհետև սա մեր ազգի թագավորներից ամենահզորն ու ամենախոհեմն էր, նրանցից բոլորից քաջ, որ «մեր բնակության սահմանները ընդարձակելով հասցրեց մինչև հին բնակության սահմանների ծայրերը... Իր ժամանակակիցներին նախանձելի եղավ, իսկ հետո եկողներիս ցանկալի, թե՛ ինքը և թե՛ իր ժամանակը: Եվ ո՞ր իսկական մարդը, ով սիրում է արիության բարքը և խոհականությունը, չի ուրախանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինել: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն մեր ազգը բարձրացրեց և մեզ... Նա (Տիգրան Մեծը – Հ. Մ.) ամեն ինչում արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով, չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»[21]: Անհրաժեշտ է այստեղ նշել, որ հայոց համազգային Ես-ի ձևավորման դիալեկտիկական գործընթացը պատմականորեն պայմանավորված է եղել դրական և բացասական հերոսների ինքնամբողջացվող Ես-երի իբրև հասարակական հակադիր դիրքերում գտնվող, հակադիր կոլեկտիվների, ցեղախմբերի կամ էթնիկական միությունները ներկայացնող մարդկանց Ես-եր: Այսպես, հայ պատմաբանասիրության մեջ գործածվող հեղինակային ուղղակի բնութագրումները օգնում են ըմբռնելու այն պատմական օրինաչափությունը, որ ի դեմս Հայկի, Արամի, Արտաշեսի, Տիգրանի և մյուսների գործ ունենք հայ էթնիկական Ես-ի ձևավորման, նրա ինքնության ու հետագա անարգել զարգացման համար մարտնչող հերոսների ինքնամբողջացվող դրական Ես-ի հետ, իսկ ի դեմս Բելի, Նյու-

[20] Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի. Պատմություն հայոց. Տփղիս, 1913, էջ 75:
[21] Խ ո ր ե ն ա ց ի. Պատմություն հայոց. Երևան, 1968, էջ 111:

քար Մադեսի, Աժդահակի և մյուսների՝ ասորաբաբելական և մարական ոսոխների, որոնց նպատակն էր վերացնել հայ տարրը և Հայաստանը որպես աշխարհագրական հասկացություն, գործ ունենք բացասական հերոսների Ես-ի հետ: Իշխելու մոլուցքով ամբողջությամբ տարված Բելը մինչև վերջ մնում է բռնակալ՝ «հպարտ ու պատերազմասեր», Նյուքար Մագեսը՝ «երկրի ապականիչ», Բարշամը՝ ապականիչ, փառամոլ և անձնասեր, Նինոսը՝ փառասեր ու անձնասեր, Աժդահակը՝ նենգ ու խորամանկ և այլն: Փաստերի համադրումից հետևում են հերոսների անձնային Ես-երի դրսևորման տարբերությունները, դրանց առանձնահատկությունները, այն, որ Հայկը ինչ-որ չափով տարբերվում է Տիգրանից, Տիգրանը՝ Արտաշեսից, Արտաշեսը՝ Արամից և այլն: «Մեկի մոտ մյուս բոլոր ընդհանուր արժեքների հետ,– գրում է Գր. Գրիգորյանը,– միասին երանգավորվում է բանականությունն ու խելքը (Տիգրան), մյուսի մոտ՝ աշխատասիրությունը (Արամ), երրորդի մոտ՝ շինարարական գործունեությունը (Արտաշես) և այլն: Ընդհանրության հետ միասին նաև տարբերություններ ենք տեսնում բացասական կերպարների Ես-երի դրսևորման միջև: Բելը աչքի է ընկնում իր տիտանական ուժով, Աժդահակն իր խորամանկությամբ, Նինոսն իր փառամոլությամբ և այլն»[22]:

Հայ ժողովուրդն իր նյութական և հոգևոր մշակույթը, իր արվեստը, գրականությունն ու փիլիսոփայությունը ստեղծել է ազատության, ինքնորոշման և անկախության համար մղված դարավոր անհաշտ պայքարի, հերոսական մաքառման բովում: Դրանով է պայմանավորված այն, որ ազատագրական պայքարը կազմում է հայ դասական գրականության հիմնական բովանդակությունը. ազատասիրության և հայրենասիրության վսեմ գաղափարները կարմիր թելի պես անցնում են հայ գրականության գլուխգործոցների միջով: Նույնը կարելի է ասել նաև ժողովրդական բանարվեստի, հատկապես էպոսի մասին, որ նախորդել և ապա ուղեկցել է հայ դրականությանը: Հատկանշական է, որ մեր ժողովուրդը վաղնջագույն դարերում կերտելով իր ուրույն Ես-ի լինելիության հիմնադիր առասպելը «Հայկի և Բելի» մասին, այն մարմնավորել է ազատության գաղափարով: Ազատություն, որով տոգորված է ողջ հայ պատմաբանասիրությունը՝ V դ. սկսած: Այդ առիթով Ավ. Իսահակյանը նշում է. «Մեր գրականության իշխող պաթոսը, նրա առաքելությունը դարերի անհաշտ պայքարն է հանուն հայրենիքի ազատության, ազգային մշակույթի և անկախ պետության...: Մեր գրականությունը բռնակալների, հարստահարողների, ջարդարարների գրականություն չէ, այլ մարտնչող, բողոքող, ըմբոստացող (Ես-ի – Հ. Մ.) ազատաբաղձ ոգու՝ տոգորված աշխատանքի, հումանիզմի, արդարության վսեմ իդեալներով: Այդ պայքարի ոգին կայծակի պես անցել է հայ դրականության մի ծայրից մյուսը, սկսած Մովսես Խորենացուց, Եղիշեից, Սեբեոսից, միջին դարերի միջով, մեր ֆոլկլորի միջով, մինչև Խաչատուր Աբովյան, Միքայել Նալբանդյան, Պատկանյան, Ռաֆֆի, Մերենց, Թումանյան, Սիամանթո, Վարուժան, Վ. Տերյան ներառ-

---

[22] *Գ ր. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հայ ժողովրդական բանահյուսություն. Երևան, 1980, էջ 158:*

յալ»[23]*: Իսահակյանի անձնային Ես-ը ձուլվել էր հայրենիքի և ժողովրդի Ես-ի հետ, որը ցայտուն դրսևորվում է հատկապես «Է՜յ, ջա՜ն-հայրենիք» բանաստեղծության մեջ, որը միաժամանակ հայ ժողովրդի քաղաքական կյանքի խորը փիլիսոփայական իմաստավորումն է:*

Լ. Հախվերդյանը, խոսելով Հովհ. Թումանյանի Ես-ի անհատականության դիալեկտիկական վերընթացի մասին, նշում է. «Դարասկզբից ի վեր Թումանյանը հայկական Պառնասի ո՛չ միայն հռչակավոր անուններից էր, այլև հայ գեղարվեստական կյանքի կենտրոնական ու կենտրոնաձիգ դեմքը: Միայն նրա մոտ, նրա օջախում հիմնադրվեց «Վերնատուն» հայտնի գրական խմբավորումը, ուր հայ գրողները գրեթե գտնվում էին անվերջ դիալոգիկ-տրամախոսական բանավեճերի, ընթերցումների, քննարկումների, քննադատությունների, կարծիքների փոխանակման, և որպես գրողների առանձին-առանձին իրենց անձնային Ես-ի ինքնամբողջացման և ինքնահաստատման գործընթացի մեջ: Այո, Թումանյանն այդ կենտրոնաձիգ և գունագեղ Ես-ն էր, որի հյուրընկալ հարկի ներքո պարբերաբար տեղի էին ունենում Հայոց գեղարվեստական կաճառի տասնիններորդ դարի վերջի և քսաներորդ դարի սկզբների անվանի մշակների առաջին հանդիպումները»[24]*: Լուսաշող հանդիպումները, որոնք բանաստեղծի կյանքում առանձնանում են որպես մարդկային և խաղաղ ստեղծագործական ընթացքի ամենաբարենպաստ, Թումանյանական Ես-ի ծաղկման տարիներ: Միանգամայն սխալ կլինի զգալ և չնկատել XX դ. առաջին տասնամյակում ինքնահաստատման ձգտող Թումանյանական Ես-ի և իր հարազատ ժողովրդի ընդհանուր Ես-ի փոխադարձ կապը բովանդակ մարդաշխարհի Ես-ի հետ, որը շարունակվեց մինչև բանաստեղծի սրտի վերջին զարկը: Հայտնի է, որ եթե մինչև 1903թ. Թումանյանը միայն արվեստի մարդ էր՝ իր կոչմանն ու տաղանդին հավատարիմ, դրանից հետո դարձավ հասարակական գործիչ՝ հավատարիմ իր ձգտումներին, խառնվածքին ու իդեալներին: 1905–1906 թթ. Անդրկովկասը բռնկվեց հայ-թուրքական ազգամիջյան արյունալի ընդհարումներով, բանաստեղծի Ես-ն առանց վարանելու իր տեղը գտնեց սոցիալականորեն ակտիվ ու մարտնչող կենսագիրք ունեցող քաղաքացու Ես-ին՝ քաղաքացի պոետ-մարտիկին: Թումանյանի Ես-ը ձուլվել էր ազգայինի հետ և ձուլել ազգային ընդհանուր Ես-ը. իր անձնային Ես-ի մեջ, անգամ տխուր պահերին, գրել, խորհել, գործել է, ամենքի հետ ապրել, ամենքի հետ տառապել: Հովհ. Թումանյանը կարողացել էր հասնել սեփական Ես-ի և ազգային Ես-ի անգուգական ներդաշնակակերտության, և ընդունակ ապրելու իր մտքերով ու ուրիշների զգացմունքներով, ընդունակ գործելու ուրիշների նկատմամբ հարգանքի, բարության, անշահախնդիր հոգածության և հանուն ճշմարտության հաղթանակի ալտրուիստական սկզբունքով, ո՛չ սարսափի կամ երկյուղի և ո՛չ էլ հանուն շահադիտական հպանցիկ գովեստների ու առանձնակի շնորհավորանքների: Երբ 1915թ. ապրիլին սկսվեց հրեշավոր ոճրագործությունը՝ Մեծ եղեռնը, որն ուղղակիորեն ծրագրավորված քայլ էր Հայկական հարցը «վերջնականորեն լուծելու» և հայոց ազգային էթնիկական Ես-ը Տաճկա-*

---

[23] *Ա վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու. հ. IV, Երևան, 1975, էջ 159:*

[24] *Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Ընտիր երկեր. հ. I, Երևան, 1985, էջ 18–19:*

Հայաստանում արյան ծովի մեջ խեղդելու համար. «Ամենայն Հայոց Բանաստեղծը» հայ գրողների ընկերության անունից աշխարհի գրեթե բոլոր մշակութային հաստատություններին հղած իր և իր գաղափարակիցների ու ընկերակիցների ըմբոստացող Ես-ի կողմից հեռագրում նշում էր, որ թուրքական կառավարությունը սկսել է կոտորած Էրզրումից մինչև Կիլիկիա, Սև ծովից՝ Միջագետք: Ուստի, Հայոց գրողների ընկերությունը գիմում է ի գեմս նրանց՝ լուսավոր հասարակություններին և խնդրում բարձրացնել իրենց ձայնը այս անօրինակ ոճրի հանդեպ:

Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման,
Կանչեցի թշչվառ էն հոգիներին՝ ցրված հավիտյան
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն Հայոց,
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:
- Հանգե՛ք, իմ որբեր... Իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ...
Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կմնա...[25]

Քաղաքական նման անհուսալի իրավիճակում ևս իսպառ չէր ընկճվում թումանյանական Ես-ը, որն օր ու գիշեր անդադրում աշխատում էր որբերին ու գաղթականներին օգնելու համար: Իր վիթխարի հեղինակությամբ ստեղծում էր օգնության կոմիտեներ և հայրենակցական միություններ, որպեսզի կարողանար հնարավոր բոլոր միջոցներով պահել ու պահպանել հայ մարդուն:

Հայոց Ես-ի խիզախումի և բացառիկ ներքնատնտեսությամբ օժտված խոհերի ու ապրումների մի ամբողջ դրսևորում ենք տեսնում նաև Եղ. Զարենցի ինքնահաստատվող Ես-ի մեջ: Հակառակ քաղաքակիրթ աշխարհի բարբարոսական աղմուկի և գիշատիչ տերությունների անպատկառ ու լպիրշ քաղաքականության, Զարենցի ձևավորվող բանաստեղծական պայծառ Ես-ը համարձակորեն դուրս եկավ մարդասպանության, ավերիչ թալանի և կործանման ամեն մի դրսևորման դեմ: Պատերազմական արյունալի թոհուբոհի այդ բարդ և խառը իրավիճակում (1915–1916) մարդկային անկրկնելի և ամբողջական Զարենցի Ես-ը, որից դառնացել ու օտարվել էր նրա եսաշխարհը, որովհետև շուրջը ամեն մի իր և առարկա խորթ էր, սառը և թշնամական դավեր էր նյութում իր դեմ.

Եվ թշնամի էր մեզ ամեն մի քար,
Եվ ամեն մի իր լարում էր դավեր:
Եվ անցնում էինք մենք հանդիսաքայլ
Այն ճամփաների հետքերով ավեր,
Ուր ո՛չ մի էակ այլևս չկար,
Ուր չէ՛ր կարող մարդ խղճալ ու ցավել...[26]

Դարավոր արյունալի քառուղիներով անցած հայ ժողովրդի պատմամշակութային և իմաստասիրական փորձից ելնելով, կարող ենք ասել, որ

---

[25] *Նույն տեղում, էջ 102–103:*
[26] *Ե ղ. Զ ա ր ե ն ց. Երկերի ժողովածու. հ. I, Երևան, 1986, էջ 303:*

անձնային Ես-ի գոյատևման համար անհրաժեշտ են բարենպաստ մարդկային պայմաններ: Միայն խաղաղ և ստեղծագործ պայմանների առկայության դեպքում հնարավոր կլինի ոչ միայն անձնային, այլև ազգային Ես-երի անկաշկանդ ձևավորման և ինքնամբողջացման գործընթացը: Դա միաժամանակ նշանակում է ինքնագիտակցում և ինքնաճանաչում:

Անձի սեփական Ես-ը կյանքի այն կենարար օջախն է, ուր բաբախում է միջեսային հարաբերությունների սիրտը՝ այն գլխավոր շարժիչը, առանց որի մենք կդադարենք ուսումնասիրել և իմանալ հայ պատմաբանասիրության հինավուրց հոյակերտ ոճով կառուցված լեզվական, գրական և քերականական կուռ տրամաբանություն ունեցող և փիլիսոփայական հնչեղությամբ օժտված ակունքները:

ДИАЛЕКТИКА САМОИНТЕГРАЦИИ "Я" И АРМЯНСКАЯ ИСТОРИКО-ФИЛОЛОГИЯ

ГЕНРИ МОКОЯН

Р е з ю м е

Проблема диалектики самоинтеграции человеческого "Я" в армянской историко-филологической мысли рассматривалась как проблема взаимоотношений и взаимообусловленности личностного и национального "Я". Именно такой процесс самоинтеграции испокон веков происходил через активное восприятие прошлого и настоящего истории и культуры армянского народа и формировался как изначальный принцип историко-филологического мировоззрения.